

U $\frac{11}{821}$

15.00.01

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍՈՒՐԻԿԻ

ԹԹԵՆԻ ՍԵՎԻ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՆՅԱՐԴԱՊԱՇՏՊԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂԵՂԻ ՏԵՂԱՅԻՆ ԻՇԵՄԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ
դեղագործական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության
ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ
МХИТАРА ГЕРАЦИ

МАРГАРЯН ТИГРАН СУРИКОВИЧ

ИЗУЧЕНИЕ НЕЙРОПРОТЕКТИВНОЙ АКТИВНОСТИ ЛИСТЬЕВ
ШЕЛКОВИЦЫ ЧЕРНОЙ ПРИ ЛОКАЛЬНОЙ ИШЕМИИ ГОЛОВНОГО МОЗГА

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата фармацевтических наук
по специальности 15.00.01 – «фармацевтика»

ЕРЕВАН – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երեւանի Մ. Դերացու անվան պետական բժշկական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յ.Վ. Թովչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ղեղազործական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Խաչատրյան

բժշկական գիտությունների թեկնածու Ա.Ս. Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն L. Սնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ:

Պաշտպանությունը կայանալու է 2014թ-ի հոկտեմբերի 20-ին ժամը 16:00-ին Երեւանի Մ. Դերացու անվան ԵՊԲՀ գործող ԲՈՅ-ի 026 «Տեսական բժշկություն» մասնագիտական խորհրդի նիստում (ՀՀ, 375025, գ. Երեւան, Կորյունի 2)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊԲՀ գրադարանում Սեղմագիրն առաքված է 2014թ. սեպտեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ *Ս. Տաթևյան* կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Տեր-Մարկոսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном медицинском университете им. М. Гераци

Научный руководитель: доктор медицинских наук, профессор А.В. Топчян

Официальные оппоненты: доктор фармацевтических наук, профессор А.С. Хачатрян

кандидат медицинских наук, А.С. Григорян

Ведущая организация: Институт тонкой органической химии им. А. Мнджояна

Защита состоится 20 октября 2014 г. в 16:00, на заседании специализированного совета 026 "Теоретическая медицина" ВАК при ЕрГМУ им. М. Гераци (РА, 375025, г. Ереван, ул. Корюна 2).

С диссертацией можно ознакомиться в библиотеке при ЕрГМУ им. М. Гераци

Автореферат разослан 19 сентября 2014г.

Ученый секретарь специализированного совета



Ս. Տաթևյան

доктор биологических наук, профессор А.С. Тер-Маркосян

11-821

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Համաձայն Առողջապահության

Համաշխարհային Կազմակերպության վիճակագրական տվյալների Հայաստանի Հանրապետությունում, ինչպես եւ ողջ աշխարհում գլխուղեղաճեղքային հիվանդությունները մարդկանց մոտ հանդիսանում են մահացության երրորդ պատճառը սրտանոթային հիվանդություններից եւ քաղցկեղից հետո (WHO, 2014): Յուրաքանչյուր տարի գրանցվում են գլխուղեղի կաթվածի (ԳԿ) միլիոնավոր դեպքեր, որոնց 2/3-ը զարգանում է մինչեւ 70 տարեկան հասակում (Strong, K, et al., 2007): Ավելին, հիվանդների մոտ 1/3-ը, ովքեր կենդանի են մնում 6 ամսվա ընթացքում դառնում են անաշխատունակ, որոնց մեծ մասն էլ այլ անձանց խնամքի կարիք են ունենում (Allen, CL and Bayraktutan, U, 2009; Warlow, CP, 1998): Այդ պատճառով այն հասարակության համար հանդիսանում է կարևոր սոցիալական և տնտեսական խնդիր: Միևնույն ժամանակ ԳԿ-ների աճի միտումը 21-րդ դարում զնահատվում է 12-35% (Strong, K, et al., 2007):

ԳԿ-ների գլխավոր երկու պատճառներն են ուղեղի իշեմիան և հեմոռագիան: Ընդ որում դրանց 80-85%-ը բաժին է ընկնում իշեմիկ կաթվածներին, որոնք զարգանում են գլխավորապես միջին ուղեղային զարկերակի (ՄՈՒԶ) եւ/կամ նրա ճյուղերի թրոմբիկ կամ էմբոլիկ խցանման հետևանքով (Durukan, A and Tatlisumak, T, 2007; Green, AR, 2008):

Մարդկանց մոտ ինսուլտը կարող է հետևանք դառնալ վերջույթների կաթվածի, զգացողական դեֆիցիտի, հիշողության եւ ուսուցման նվազման, դեմենցիայի եւ դեպրեսիայի զարգացման (Mendis, S, 2010), եւ չնայած գիտության զարգացմանը, իշեմիկ ինսուլտի բուժման արդյունավետությունը դեռեւս սահմանափակ է (Alberts, MJ and Ovbiagele, B, 2007; Goldstein, LB, 2007):

Իշեմիայի պաթոգենեզը դեռեւս լիովին պարզաբանված չէ: Արնամատակարարման նվազումը հանգեցնում է իշեմիկ կասկադի ձևավորման, որն իր մեջ է ընդգրկում մի շարք փոխկապակցված պաթոգենետիկ օղակներ: Այդ պաթոգենետիկ ուղում զարգանում է դրդող ամինաթթուների էքսալտոտոքսիկ ազդեցություն (Kobayashi, H et al., 2001), ներքջջային Ca²⁺-ի ավելացում (Xiao, ZY et al., 2006), թթվածնի ակտիվ ձեւերի գերառաջացում (Chan, PH, 2001; Wang, Q et al., 2007), բորբոքում (Liou, KT et al., 2003; Liu, YG et al., 2010), ապոպտոզ (Singhal, A et al., 2011) եւ այլն: Արդյունքում, նեյրոնների իշեմիկ վնասման ժամանակ զարգացող ներքջջային այտուցը, միտոքոնդրիալ դիսֆունկցիան եւ բջջաթաղանթի վնասումը/քայքայումը հանգեցնում են նեյրոնների մահվան նեկրոզի կամ ապոպտոզի ճանապարհով (Singhal, A et al., 2011):

ԳԿ-ի բուժման երկու հիմնական մոտեցումներն են՝ ռեպերֆուզիան և նեյրոպրոտեկցիան (Fisher, M, 2011): Միակ ղեղամիջոցը, որը հաստատված է կլինիկական կիրառման համար ռեկոմբինանտ հյուսվածքային պլազմինոգենի ակտիվացնող գործոնն է (ռՀՊԱԳ) (1995): Ընդ որում, այն հիվանդների միայն 4-5%-ին է հասանելի դառնում՝ կարճ թերապեւտիկ պատուհան ունենալու պատճառով, բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ հետազոտությամբ հաստատել, որ կաթվածն իշեմիկ է այլ ոչ թե հեմոռագիկ (Green, AR, 2008):

Նեյրոպրոտեկտորների կիրառությունն ուղղված է պահպանելու նեյրոնները՝ իշեմիայի հետևանքով զարգացող ախտածնական օղակների վրա ազդելով: Այդ նպատակի իրագործման համար կիրառվում են կալցիումի անտագոնիստներ, մատրիումական մոլանցքների պաշարիչներ, գլյուտամատային ընկալիչների պաշարիչներ, ապոպտոզ ընկճողներ, զամմա ամինակարագաթթվի (ԳԱԿԹ) համակարգի խթանիչներ, հակառադիկալային միջոցներ, թաղանթային անոթազանցող միջոցներ: Մինչ այժմ փորձարկվել են 1000-ից ավելի միացություններ (O'Collins, VE et al., 2006): ԵՎ չնայած նեյրոպրոտեկտորների կլինիկական կիրառման հավաստի

արդյունավետության բացակայությանը, նոր միացությունների ուսումնասիրությունները շարունակվում են:

Թթենի սելը (*Morus nigra*) բազմամյա ծառ է, որը լայն տարածում ունի հայկական ֆլորայում: Թթենու տերեւները օժտված են հակաօքսիդանտային, հակառիտմալային, հակաբորբոքային, հիպոլիպիդեմիկ հատկություններով (Doi, K et al., 2000; Lee, CY et al., 2007): Ավելին, բազմաթիվ *in vitro* եւ *in vivo* հետազոտությունների համաձայն թթենու տերեւները նվազեցնում են օքսիդատիվ սթրեսը (Doi, K et al., 2000), ցուցաբերում են հիպոգլիկեմիկ (Kim, GN et al., 2011; Park, JM et al., 2009), հակաաթերոգեն (Chan, KC et al., 2009; Yang, MY et al., 2011) եւ նյարդապաշտպան (Lee, CY et al., 2007) ազդեցություն:

Չայկական ֆլորայում աճող թթենի սելի տերեւները, ըստ մասս-սպեկտրոսկոպիկ հետազոտության տվյալների, պարունակում են զգալի քանակությամբ տենցիալ եւ պայմանական տենցիալ տարրեր (Кочикян, А, 2011), հարուստ են նեյրոակտիվ ամինաթթուներով (ասպարագինաթթու, գլյուտամինաթթու, գլիցին, ԳԱԿԹ), եւ *in vitro* պայմաններում ցուցաբերում են արտահայտված հակաօքսիդանտային ազդեցություն (Кочикян, А et al., 2010):

Չետազոտության նպատակն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել թթենի սելի տերեւների ջրային լուծամզվածքի (ԹՍՄՆ) նյարդապաշտպան ազդեցությունը ուղեղի իշեմիկ ախտահարման ժամանակ: Այդ նպատակի իրագործման համար մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- հանուկների ստացման տեխնոլոգիական օպտիմալ պայմանների մշակում,
- ԹՍՄՆ-ում նեյրոակտիվ ամինաթթուների քանակական որոշում,
- ԹՍՄՆ-ի կիրառման պայմաններում գլխուղեղի կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրում առնետների մոտ ուղեղի իշեմիկ ախտահարման ժամանակ,
- նեյրոակտիվ ամինաթթուների քանակական փոփոխությունների ուսումնասիրում ուղեղի տեղային իշեմիայի պայմաններում ԹՍՄՆ-ի կիրառման ժամանակ,
- ԹՍՄՆ-ի ազդեցության ուսումնասիրում առնետների վարքի և հիշողության վրա ուղեղի տեղային իշեմիայի պայմաններում:

Գիտական նորություն: Կատարված հետազոտություններում ցույց է տրվել, որ հայկական ֆլորայում աճող թթենի սելի տերեւները հարուստ են նեյրոակտիվ ամինաթթուներով: Մշակվել է նոր եղանակ բույսերում ամինաթթուների որոշման համար: Կատարվել է ԳԱԿԹ-ի քանակական ավելացում թթենու տերեւներում (ԹՍ) գլյուտամինաթթվի ֆերմենտատիվ ձեւափոխման արդյունքում: Ցույց է տրվել, որ ԹՍՄՆ-ն ցուցաբերում է հակաիշեմիկ ազդեցություն ուղեղի տեղային իշեմիայի պայմաններում: Ապացուցվել է, որ ԹՍՄՆ-ն կանխում է հետիշեմիկ շրջանում զարգացող գլյուտամատային էքսայտոտոքսիկությունը, ինչպես նաեւ ԳԱԿԹ-ի քանակական նվազումը: Միեւնույն ժամանակ, վեր է հանվել այն, որ ԹՍՄՆ-ն կանխում է իշեմիայի հետեւանցով զարգացող վարքային խանգարումները՝ ցուցաբերելով տազնապամարիչ ազդեցություն եւ նպաստելով շարժողական ակտիվության բարձրացմանը:

Գիտագործնական նշանակությունը:

Գլխուղեղի կաթվածի հետեւանցով զարգացող խնդիրները, աճի միտումներն ու արդյունավետ բուժման բացակայությունը խթան են հանդիսանում նոր միջոցների փնտրմանը ողջ աշխարհում: Բուսական ծագման միջոցները հիմք են հանդիսացել սինթետիկ միջոցների ստեղծման համար դեռեւս չեն կորցրել իրենց

նշանակությունը եւ լայնորեն կիրառվում են տարբեր հիվանդությունների ու իրավիճակների կարգավորման եւ բուժման համար: Ստացված արդյունքները կարող են նպաստել գլխուղեղի կաթվածի բուժմանն ուղղված միջոցների ստեղծմանը: Ինչպես նաեւ կիրառված մեթոդները կարող են օգտագործվել այլ հետազոտություններում:

Ատենախոսության նախնական փորձաքննությունը:

Ատենախոսությունը նախնական փորձաքննության է ենթարկվել ԵՊԲ-ի գիտակրողի հիմնադր խորհրդում 2012թ. նոյեմբերի 7-ին, արձանագրություն թիվ 8:

Չրապարակումները:

Ատենախոսության թեմայով տպագրվել է 4 հոդված:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը շարադրված է 108 տպագրական էջերի վրա եւ բաղկացած է հետեւյալ բաժիններից. ներածություն, գրական ակնարկ, հետազոտության նյութն ու մեթոդները, արդյունքներ եւ վերլուծություն, քննարկում եւ ամփոփում, եզրակացություններ, գրականության ցանկ: Աշխատանքը պարունակում է 17 նկար եւ 22 աղյուսակ: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 222 աղբյուր:

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. Բույսի հավաքն ու չորացումը

Թթենի սելի տերեւները հավաքվել են Արմավիրի մարզի Արմավիր քաղաքից պտղաբերության շրջանում: Հավաքից հետո տերեւները չորացվել են ստվերում, հողմահարվող տարածքում, ապա մանրացվել ըստ ֆարմակոպեայի պահանջների: Ջրային լուծամզվածքի պատրաստման համար մանրեցված տերեւները անց են կացվել N 60 մաղով:

2. Լուծամզվածքի ստացումը

Ջրային լուծամզվածքը պատրաստվել է 1:10 հարաբերությամբ՝ ջրաբաղնիսում 3 ժամ տեւողությամբ, 40±5 °C ջերմաստիճանում, անաէրոբ պայմաններում: Թրմումից հետո լուծամզվածքը քամվել է թանգիֆով եւ քամվածքը կիրառվել հետազոտության համար:

3. Ամինաթթուների քանակական որոշումը

Ամինաթթուների քանակական որոշումը կատարվել է բարձրարդյունավետ հեղուկային քրոմատագրության միջոցով ըստ *Pearson SJ. et al.* (Pearson, SJ et al., 1991), եւ *Rowley HL. et al.* (Rowley, HL et al., 1995):

Չեղուկ ֆազան. pH5.6 ֆոսֆատային բուֆեր եւ մեթանոլ 25:1 ծավալային հարաբերակցությամբ:

Աշտարակը. Phenomenex C18, 5 մկմ, 150մմ, 4.6 մմ

Չետեկտոր. էլեկտրաքիմիական դետեկտոր ДЭ-108, Биохром, Россия

4. Թթենի սելի տերեւներում ԳԱԿԹ-ի ավելացումը անաէրոբ պայմաններում

Մանրեցված թթենու սելի տերեւները (N60 մաղով անցկացնելուց հետո) խառնվել են գլյուտամինաթթվի լուծույթի հետ (1, 0.75, 0.5, 0.25, 0.125%) 1:10 հարաբերությամբ: Ստացված խառնուրդը ինկուբացվել է ջրաբաղնիսում 40°C ջերմաստիճանում, անաէրոբ պայմաններում: 3 ժամ անց խառնուրդը եռացվել է 5 ռոպե տեւողությամբ ֆերմենտների դեմատուրացիայի նպատակով, լուծամզվածքը քամվել է թանգիֆով եւ քամվածքը կիրառվել հետազոտության համար: ԳԱԿԹ-ի կոնցենտրացիայի որոշումը կատարվել է վերը նշված եղանակով:

5. Սորիսի ջրային լողավազան

Կենդանիների տարածական հիշողության ուսումնասիրությունը կատարվել է Սորիսի ջրային լողավազան (USL) թեստում (Morris R., 1981, Vorhees CV. & Williams MT., 2006):

6. Բարձրացված խաչածեւ լաբիրինթոս

Կենդանիների վարքի ուսումնասիրությունը կատարվել է բարձրացված խաչածեւ լաբիրինթոս (ԲԽՆ) թեստում: ԲԽՆ թեստը կրծողների վարքի գնահատման եղանակ է եւ այն վախիղացված է դեղաբանական միջոցների տազնապամարիչ ազդեցությունը գնահատելու, ինչպես նաև ուղեղի հատվածներն ու մեխանիզմները բացահայտելու համար, որոնց հիմքում ընկած է տազնապ կախյալ վարքագիծը (Walf, AA and Frye, CA, 2007):

ԹՄՏԼ-ի տազնապամարիչ ազդեցության ուսումնասիրման համար օգտագործվել է 8մլ/կգ եւ 40մլ/կգ դեղաչափերը, որը տրվել է *per os* ճանապարհով 3 օր շարունակ, օրական 1 անգամ՝ սկսած ՄՈՒՁ-ի կապումից 1.5 ժամ անց:

ԲԽՆ եւ ՄՏԼ թեստերում ուսումնասիրվող ցուցանիշները գրանցվել են Smart Junior ծրագրի միջոցով:

7. Պասիվ խուսափման ռեֆլեքս

Կենդանիների պայմանական ռեֆլեքսային հիշողությունը ուսումնասիրվել է պասիվ խուսափման ռեֆլեքսի մոդելի վրա (Ader et al., 1972):

8. Ուղեղի տեղային իշեմիայի մոդելավորումը

Ուղեղի տեղային իշեմիայի մոդելավորումը կատարվել է ձախ ՄՈՒՁ-ի կապման միջոցով ըստ Tamura et al. (1981) կողմից առաջադրված մեթոդի՝ մոդիֆիկացված Topchyan et al. (1996) կողմից: Վիրահատությունները կատարվել են ընդհանուր անզգայացման պայմաններում՝ քլորալ հիդրատ 400մգ/կգ, ներորովայնային:

9. Սորիսի լողավազանի հետազոտություններ

Գլխատելուց հետո անջատվել է ստուգիչ և փորձարարական խմբերի առնետների գլխուղեղները: Ֆորմալդեհիդի 7%-անոց լուծույթում ֆիքսացիայից հետո պատրաստվել են պարաֆինային բլոկներ: 5-7 մկմ հաստությամբ միկրոտոմային պարաֆինային կտրվածքները ներկվել են լուբսոլով եւ հեմատաքսիլին-եռզինով:

10. Կենդանիները

Փորձերն իրականացվել են թվով 120 անցեղ, սպիտակ արու առնետների վրա (240-260գ): Բոլոր կենդանիները պահվել են լաբորատոր վիճարկումում՝ սննդի եւ ջրի անսահմանափակ առկայության եւ 12/12 լույս/մութ ռեժիմի պայմաններում, յուրաքանչյուր վանդակում առավելագույնը 6 առնետ: Հետազոտության համար կենդանիները բաժանվել են երեք խմբի՝ հսկիչ խումբ/նորմա (կեղծ վիրահատված առնետներ), հսկիչ խումբ (իշեմիկ առնետներ), փորձարարական խումբ (իշեմիկ առնետներ, որոնք ստացել են ԹՄՏԼ): Չախ ՄՈՒՁ-ի կապումից 1 ժամ անց *per os* ճանապարհով զոնդի միջոցով փորձարարական խմբի առնետներին տրվել է ԹՄՏԼ օրական մեկ անգամ, երեք օր շարունակ, իսկ հսկիչ եւ կեղծ հսկիչ խմբի առնետներին տրվել է թորած ջուր: Ուսումնասիրությունները կատարվել են ՄՈՒՁ-ի կապումից 6 եւ 12 օր անց:

Տվյալների վիճակագրական վերլուծությունը: Ուսումնասիրված ցուցանիշների համար ստուգվել է բաշխումների նորմալությունը Կոլմոգորով Սմիրնով թեստով: Քանի որ նորմալությունը չի ժխտվել, կիրառվել են պարամետրիկ թեստեր. Ստյուդենտի տ թեստի տարբերակները եւ ԱՆՕՎԱ եղանակը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Բույսերում նեյրոակտիվ ամինաթթուների քանակական և որակական բաղադրությունը

Թթենի սեւի տերեւները պարունակում են զգալի քանակությամբ ԳԱԿԹ (1.113 մգ/գ), գլյուտամինաթթու (0.824մգ/գ), ասպարազինաթթու (0.222 մգ/գ) եւ գլիցին (0.058 մգ/գ): Տաուրինը, որը գլխավորապես պարունակվում է կենդանական ծագման օրգանիզմներում, ԹՄՏ-ում չի հայտնաբերվել:

Վերլուծելով գրականության տվյալները՝ հետագա դեղաչափավորումը կատարվել է ըստ ԳԱԿԹ-ի: Հետազոտության համար ընտրվել է երկու դեղաչափ՝ 8մլ/կգ (0.9մգ/կգ ըստ ԳԱԿԹ-ի), 40 մլ/կգ (4.5մգ/կգ ըստ ԳԱԿԹ-ի) (լուծանման ժամանակ պատրաստվել է 1:10 հարաբերակցությամբ):

2. Թթենի սեւի տերեւներում ԳԱԿԹ-ի ավելացումը անաէրոբ պայմաններում

Գլյուտամինաթթվի միջավայրում ԹՄՏ-ի անաէրոբ ինկուբացիայի պայմաններում տեղի է ունենում ԳԱԿԹ-ի քանակական ավելացում (*Աղյուսակ 1*), ինչը վկայում է այն մասին, որ թթենու չոր տերեւներում առկա է գլյուտամատ դեկարբօքսիլազան, որը գտնվում է պասիվ վիճակում եւ համապատասխան պայմաններում այն ակտիվանում է:

Աղյուսակ 1

ԳԱԿԹ-ի եւ գլյուտամինաթթվի կոնցենտրացիաները ինկուբացիայից հետո

(n=6)	Գլյուտամինաթթվի կոնցենտրացիան ինկուբացված միջավայրում			
	0%	0.5%	0.25%	0.125%
ԳԱԿԹ*	1,113±0.056	6,235±0.121	4,633±0.132	2,561±0.072
Գլյուտամինաթթու*	0,824±0.072	18,513±0.252	8,3±0.103	5,004±0.088

*մգ/գ վերահաշվարկված չոր զանգվածում

Հաշվի առնելով ԳԱԿԹ-ի ելքի եւ գլյուտամինաթթվի մնացորդի հարաբերական բարձր արժեքը (0.55) 0.25% գլյուտամինաթթվի լուծույթով ԳԱԿԹ-ով հագեցված ԹՄՏԼ-ն (ԳՀԹՄՏԼ) կիրառվել է ուսումնասիրելու վերջինիս նյարդապաշտպան եւ տազնապամարիչ ազդեցությունը առնետների վրա գլխուղեղի տեղային իշեմիայի մոդելում (8մլ/կգ դեղաչափով, լուծանման ժամանակ պատրաստվել է 1:10 հարաբերակցությամբ):

3. Ուսուցում եւ հիշողություն

Գլխուղեղի տեղային իշեմիայի պայմաններում տարածական հիշողության հետազոտումը ՄՏԼ թեստում

Ուսուցման ստուգման հաջորդ օրը հսկիչ խմբի առնետների մոտ կատարվել է կեղծ վիրահատությունը, իսկ իշեմիկ խմբի մոտ՝ ՄՈՒՁ-ի կապում: Վիրահատությունից 6 եւ 12 օր անց հետազոտվել է առնետների տարածական հիշողությունը: Գրանցված արդյունքները ներկայացված են Աղյուսակ 2-ում (արդյունքները ներկայացված են M±SEM տեսքով):

Արդյունքները ցույց են տալիս, որ իշեմիկ եւ հսկիչ խմբերում թիրախային հատվածում անցկացրած ժամանակի, անցած ճանապարհի եւ միջին արագություն ցուցանիշների հավաստի տարբերություն չկա (*Աղյուսակ 2*): Հետազոտության 12րդ օրը հսկիչ եւ իշեմիկ խմբերում գրանցվում է տարածական հիշողության նվազում՝ պայմանավորված թիրախային հատվածում անցկացրած ժամանակի նվազմամբ ($p<0.07$):

Այսինքն, ՄՈՒՁ-ի կապման հետեւանքով զարգացող իշեմիան տարածական հիշողության խանգարում չի առաջացնում հետիշեմիկ շրջանի 6րդ օրը: 12րդ օրը գրանցված տարածական հիշողության նվազումը կարող է պայմանավորված լինել կենդանիների մոտ թեստի նկատմամբ տոլերանտության զարգացմամբ:

Աղյուսակ 2

Մորիսի ջրային լողավազան թեստում առնետների անցած ճանապարհը, տարբեր հատվածներում անցկացրած ժամանակը, միջին արագությունը իշեմիայից 6 եւ 12 օր անց:

	Անցած ճանապարհի (սմ)	ՀսԱմ	ՀսԱԵ	ՀվԱԵ	ՀվԱՄ	միջին արագություն (սմ/վ)
հսկիչ 6րդ օր (n=9)	442,9±39,50	12,85±1,00	4,99±1,077	5,92±1,73	6,35±1,44	14,76±1,32
իշեմիա 6րդ օր (n=8)	467,9±29,79	11,44±0,53	8,32±0,87	4,79±0,66	5,45±0,67	15,60±0,99
հսկիչ 12րդ օր (n=9)	514,9±32,68	9,19±0,82*	5,48±0,26	6,77±1,32	8,56±1,29	17,16±1,09
իշեմիա 12րդ օր (n=8)	500,8±31,12	9,00±0,66**	5,32±0,37	7,70±1,06	7,98±1,02	16,69±1,04

*p<0.01 համեմատած 6-րդ օրվա հսկիչ խմբի ցուցանիշի հետ

**p<0.01 համեմատած 6-րդ օրվա իշեմիկ խմբի ցուցանիշի հետ

Գլխուղեղի տեղային իշեմիայի պայմաններում պայմանական ռեֆլեքսային հիշողության հետազոտումը պասիվ խուսափման ռեֆլեքս թեստում

Պայմանական ռեֆլեքսի ձեւավորման ստուգման հաջորդ օրը հսկիչ խմբի առնետների մոտ կատարվել է կեղծ վիրահատություն, իսկ իշեմիկ խմբի մոտ՝ ՄՈւԶ-ի կապում: Հետազոտության 6րդ եւ 12րդ օրերում իշեմիկ խմբի առնետների մոտ, համեմատած հսկիչ խմբի հետ, հետազոտվող ցուցանիշի հավաստի փոփոխություն չի գրանցվել: Այսինքն, ՄՈւԶ-ի կապման հետեւանքով զարգացող իշեմիան պայանական ռեֆլեքսային հիշողության փոփոխություն չի առաջացնում:




4. Առնետների վարքային տեղաշարժերը եւ դրանց համուղղումը ԹՄՏԼ-ով ՄՈւԶ-ի կապման պայմաններում իշեմիայից 6 եւ 12 օր անց, ԲԽԼ թեստում:

Առնետների վարքային տեղաշարժերը եւ դրանց համուղղումը ԹՄՏԼ-ով ՄՈւԶ-ի կապման պայմաններում իշեմիայից 6 օր անց:

Հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը ՄՈՒԶ-ի կապման հետեւանքով իշեմիկ խմբի առնետների մոտ զարգանում է տագնապ, որն արտահայտվում է բաց թելերում եւ կենտրոնում անցկացրած ժամանակի նվազմամբ ($p<0.001$), փակ թելերում անցկացրած ժամանակի ավելացմամբ ($p<0.001$), ինչպես նաեւ մուտքերի նվազմամբ՝ թե՛ բաց թելեր, թե՛ փակ թելեր, եւ թե ընդհանուր ($p<0.001$): Նվազում է նաեւ շարժողական ակտիվությունը, որն արտահայտվում է անցած ճանապարհի նվազմամբ ($p<0.01$) (Տկար 1):

Հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը փորձարարական-1 խմբում (8մլ/կգ) գրանցվել են հետեւյալ արդյունքները. բաց թելերում եւ կենտրոնում անցկացրած ժամանակը մեծանում է 3.5 եւ 4 անգամ, իսկ փակ թելերում անցկացրած ժամանակը՝ փոքրանում իշեմիկ խմբի համեմատ ($p<0.01$): Միեւնույն ժամանակ մուտքերի քանակը դեպի բաց եւ փակ թելեր ավելանում է 3 անգամ ($p<0.01$), ինչպես նաեւ մեծանում է անցած ճանապարհն ու միջին արագությունը՝ գերազանցելով իշեմիկ խմբի ցուցանիշը ($p<0.01$): Ընդ որում, բացի կենտրոնում եւ փակ թելերում անցկացրած ժամանակից, մյուս ցուցանիշները մոտենում են նորմայի սահմաններին ($p>0.05$):




Հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը փորձարարական-2 խմբում (40մլ/կգ) գրանցված բոլոր ցուցանիշները, բացի կենտրոնում անցկացրած ժամանակից, որտեղ գրանցվում է աճ ($p<0.05$), չեն տարբերվում փորձարարական-1 խմբի 6-րդ օրվա ցուցանիշներից ($p>0.05$):



Տկար 1. Առնետների վարքի փոփոխությունը ուղեղի տեղային իշեմիայի պայմաններում ԹՄՏԼ-ի ազդեցությամբ հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը
*p<0.05 համեմատած հսկիչ խմբի հետ
†p<0.05 համեմատած իշեմիկ խմբի հետ
■ նորմա ■ իշեմիա, ■ իշեմիա + 2մլ ԹՄՏԼ
■ իշեմիա + 10մլ ԹՄՏԼ

Առնետների վարքային տեղաշարժերը եւ դրանց համուղղումը ԹՄՏԼ-ով ՄՈւԶ-ի կապման պայմաններում իշեմիայից 12 օր անց

Հետիշեմիկ շրջանի 12-րդ օրը ՄՈՒԶ-ի կապման հետեւանքով իշեմիկ խմբի առնետների մոտ զարգանում է տագնապ, որն արտահայտվում է բաց թելերում եւ կենտրոնում անցկացրած ժամանակի նվազմամբ ($p<0.001$), փակ թելերում անցկացրած ժամանակի ավելացմամբ ($p<0.001$), ինչպես նաեւ մուտքերի նվազմամբ՝ թե՛ բաց թելեր, թե՛ փակ թելեր, եւ թե ընդհանուր ($p<0.001$): Նվազում է նաեւ շարժողական ակտիվությունը, որն արտահայտվում է անցած ճանապարհի նվազմամբ ($p<0.01$) (Տկար 2):




Տկար 2. Առնետների վարքի փոփոխությունը ուղեղի տեղային իշեմիայի պայմաններում ԹՄՏԼ-ի ազդեցությամբ հետիշեմիկ շրջանի 12-րդ օրը (M±SEM)
*p<0.05 համեմատած հսկիչ խմբի հետ
†p<0.05 համեմատած իշեմիկ խմբի հետ
■ նորմա, ■ իշեմիա, ■ իշեմիա + 2մլ ԹՄՏԼ
■ իշեմիա + 10մլ ԹՄՏԼ

Փորձարարական խմբերում գրանցվել են հետեւյալ արդյունքները. բաց թելերում եւ կենտրոնում անցկացրած ժամանակը մեծանում է, իսկ փակ թելերում

անցկացրած ժամանակը՝ փոքրանում, իշեմիկ խմբի համեմատ ($p < 0.01$): Միեւնույն ժամանակ ավելանում է մուտքերի քանակը դեպի բաց եւ փակ թեւեր ($p < 0.01$), ինչպես նաեւ մեծանում է անցած ճանապարհը ($p < 0.01$):

ԲխԼ թեստի արդյունքները վերլուծվել են Smart Junior ծրագրով: Նկար 3-ում ներկայացված են կենդանիների շարժման հետազոտիչի օրինակներ:



Նկար 3. Առնետների. Ա-հսկիչ, Բ-իշեմիա, Գ-իշեմիա+2ժ ԹՄՏԼ, Դ-իշեմիա+10ժ ԹՄՏԼ, շարժման հետազոտիչի օրինակներ (հետիշեմիկ շրջանի 12-րդ օր)

Քանի որ, կիրառված բարձր եւ ցածր դեղաչափերը միանման են ազդում կենդանիների վարքային փոփոխությունների վրա եւ որոշվեց հետագա ուսումնասիրություններում կիրառել հետազոտված համեմատական ցածր դեղաչափը՝ 8մլ/կգ

ԳԱԿԹ-ով հարստացված ԹՄՏԼ-ի ազդեցությունը առնետների վարքային տեղաշարժերի վրա ՄՈւԶ-ի կապման պայմաններում իշեմիայից 6 օր անց

Ի տարբերություն ԹՄՏԼ-ի, ԳՀԹՄՏԼ-ը ընդունած առնետների ԲխԼ-ի ելքային ցուցանիշները հավաստիորեն չեն տարբերվում իշեմիկ խմբի ցուցանիշներից: Այսինքն, մեր մոդելում ԳՀԹՄՏԼ-ն չի ցուցաբերում տազնապամարիչ ազդեցություն, ինչի պատճառը կարող է հանդիսանալ գլյուտամինաթթվի մեծ քանակությունը: Ստացված բացասական արդյունքների պատճառով ԳՀԹՄՏԼ-ի ազդեցությունը առնետների հետիշեմիկ շրջանի 12-րդ օրը չի ուսումնասիրվել:

5. Առնետների գլխուղեղի տարբեր հատվածներում ամինաթթուների տեղաշարժերը եւ դրանց համուղղումը ԹՄՏԼ-ով ՄՈւԶ-ի կապման պայմաններում

Առնետների գլխուղեղի տարբեր հատվածներում ամինաթթուների տեղաշարժերը եւ դրանց համուղղումը ԹՄՏԼ-ով ՄՈւԶ-ի կապման պայմաններում իշեմիայից 6 օր անց:

Հիպոթալամիկ շրջան

Հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը գրանցվում է դրող ամինաթթուների ած. ասպարազինաթթվի կոնցենտրացիան ավելանում է 367.21±30.64մկգ/գ-ից 509.25±26.86մկգ/գ ($p < 0.0001$), գլյուտամինաթթուն հասնում է 1113.38±27.83մկգ/գ մակարդակին, որը գերազանցում է նորման 1.16 անգամ ($p < 0.0001$): Արգելակող ամինաթթուների կոնցենտրացիաների փոփոխությունները համանման չեն. գլիցինի քանակները 121.27±21.92մկգ/գ-ից նվազում են 3.36 անգամ ($p < 0.0001$), իսկ տաուրինին ավելանում 1.95 անգամ ($p < 0.0001$)՝ կազմելով 617.28±30.55մկգ/գ: Ամենամեծ տեղաշարժը գրանցվում է ԳԱԿԹ-ի պարագայում. իշեմիայի արդյունքում ԳԱԿԹ-ի կոնցենտրացիան նվազում է 9 անգամ ($p < 0.0001$)՝ կազմելով 40.84±6.72մկգ/գ:

ԹՄՏԼ-ի եռօրյա ներմուծման արդյունքում իշեմիայի 6-րդ օրը, համեմատած իշեմիկ խմբի հետ, ասպարազինաթթվի եւ գլյուտամինաթթվի կոնցենտրացիաները համապատասխանաբար նվազում են 1.6 եւ 1.34 անգամ ($p < 0.01$), իսկ նորմայի հետ համեմատած՝ տարբերությունները հավաստի չեն (319.34±82.33մկգ/գ եւ 828.14±160.45մկգ/գ, համապատասխանաբար): Գլիցինի կոնցենտրացիան (80.11±23.18մկգ/գ) ավելանում է 2.22 անգամ ($p < 0.0001$) համեմատած իշեմիայի հետ, սակայն նորմայի համեմատ մնում է ցածր մակարդակի վրա ($p < 0.001$): Ի տարբերություն մյուս ամինաթթուների, այս դեպքում տաուրինի կոնցենտրացիան (243.41±23.44մկգ/գ) նվազում է 1.3 անգամ կեղծ հսկիչ խմբի համեմատ ($p < 0.001$) եւ 2.54 անգամ՝ հսկիչ խմբի համեմատ ($p < 0.0001$): ԳԱԿԹ-ի կոնցենտրացիան ԹՄՏԼ-ի ընդունումից հետո իշեմիայի պայմաններում կազմում է 349.41±46.9մկգ/գ, որը 8.5 անգամ գերազանցում է հսկիչ խմբի ցուցանիշը ($p < 0.0001$), իսկ նորմայի համեմատ տարբերությունը հավաստի չէ:

Հիպոկամպ ծախ

Այստեղ հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը ասպարազինաթթվի եւ գլյուտամինաթթվի կոնցենտրացիաները հավաստիորեն չեն փոխվում համեմատած նորմայի հետ՝ համապատասխանաբար կազմելով 260.34±8.46մկգ/գ եւ 1355.81±52.68մկգ/գ: Ի տարբերություն դրող ամինաթթուների՝ արգելակող ամինաթթուների կոնցենտրացիաները հավաստիորեն նվազում են. գլիցինինը 94.66±8.5մկգ/գ-ից դառնում է 47.81±4.55մկգ/գ, տաուրինի կոնցենտրացիան 788.34±111.6մկգ/գ-ից նվազում է մինչեւ 577.22±47.45մկգ/գ ($p < 0.001$), իսկ ԳԱԿԹ-ինը 174.78±10.26մկգ/գ-ից նվազում է մինչեւ 26.3±1.58մկգ/գ ($p < 0.001$):

ԹՄՏԼ-ի ներմուծման պայմաններում իշեմիայի 6-րդ օրը ծախ հիպոկամպում ասպարազինաթթվի քանակական տեղաշարժ չի գրանցվում, սակայն 1.31 անգամ նվազում է գլյուտամինաթթվի կոնցենտրացիան ($p < 0.001$): Գլիցինի եւ տաուրինի կոնցենտրացիաներն աճում են համապատասխանաբար 1.4 եւ 1.1 անգամ ($p < 0.001$), սակայն մնում են նորմայից ցածր մակարդակի վրա ($p < 0.001$): ԳԱԿԹ-ի կոնցենտրացիան աճում է 6.38 անգամ կազմելով 166.29±25.63մկգ/գ եւ հասնում նորմայի սահմաններին ($p > 0.05$):

Հիպոկամպ աջ

Ինչպես եւ ծախ հիպոկամպում, այստեղ եւս իշեմիայի 6-րդ օրն ասպարտատի քանակական փոփոխություն չի գրանցվում, ի տարբերություն գլյուտամատի, որի կոնցենտրացիան հավաստիորեն ավելանում է ընդամենը 1.1 անգամ՝ կազմելով 1477.05±74.3մկգ/գ: Գլիցինի, տաուրինի եւ ԳԱԿԹ-ի կոնցենտրացիաները նվազում են ($p < 0.001$) համապատասխանաբար 1.56, 1.19, 2.7 անգամ՝ կազմելով 61.48±4.99մկգ/գ, 578.86±46.06մկգ/գ եւ 67.23±16.58մկգ/գ:

ԹՄՏԼ-ի ազդեցության տակ հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը գրանցվում է գլյուտամինաթթվի նվազում 1.34 անգամ հսկիչ խմբի ($p < 0.001$) եւ 1.28 անգամ նորմայի համեմատ ($p < 0.001$): Սակայն գրանցվում է ԳԱԿԹ-ի կոնցենտրացիայի ավելացում 2.48 անգամ ի համեմատ հսկիչ խմբի ($p < 0.001$)՝ կազմելով 165.75±34.25մկգ/գ, որը գտնվում է նորմայի սահմաններում ($p > 0.05$):

Միեւնույն ժամանակ ասպարազինաթթվի, գլիցինի եւ տաուրինի կոնցենտրացիաների հավաստի փոփոխություն չի գրանցվում:

Ձախ կիսագնդի կեղևի քունքային հատված (կեղևի ծախ)

Հետիշեմիկ շրջանի 6-րդ օրը իպսիլատերալ կեղևում տեղի է ունենում բոլոր նեյրոակտիվ ամինաթթուների կոնցենտրացիաների փոփոխություն. գլյուտամինաթթվի, գլիցինի, տաուրինի, ԳԱԿԹ-ի կոնցենտրացիաները նվազում են 1.54, 2.22, 1.65, 8.79 անգամ ($p < 0.001$), իսկ ասպարազինաթթվի կոնցենտրացիան ավելանում է 1.37 անգամ ($p < 0.001$)՝ համապատասխանաբար կազմելով 1092.3±57.04մկգ/գ, 64.18±3.07մկգ/գ, 425.74±20.33մկգ/գ, 24.46±5.21մկգ/գ, 502.68±24.63մկգ/գ:

ԹUSL-ի ներմուծման պայմաններում ասպարազինաթթվի կոնցենտրացիան հետիշենիկ շրջանի 6-րդ օրը կազմում է 350.9±45.2մկգ/գ, որը հսկիչ խմբի համապատասխան ցուցանիշից փոքր է 1.43 անգամ ($p<0.001$), իսկ նորմայի հետ համեմատած տարբերությունը հավաստի չէ: Գլյուտամինաթթվի կոնցենտրացիան մնում է հսկիչ խմբի մակարդակին ($p>0.05$), իսկ գլիցինը նվազում է 1.13 անգամ ($p<0.05$): Տաուրինի կոնցենտրացիան գերազանցում է հսկիչ խմբի ցուցանիշը 1.32 անգամ ($p<0.01$), իսկ ԳԱԿԹ-ինը՝ 5.08 անգամ ($p<0.001$)՝ երկու դեպքում էլ ցածր մնալով կեղծ հսկիչ (նորմա) խմբի ցուցանիշներից:

Աջ կիսագնդի կեղեւի քունքային հատված (կեղեւ աջ)

Չետիշենիկ շրջանի 6-րդ օրը կոնտրալատերալ կիսագնդի կեղեւում ներյուակտիվ ամինաթթուների կոնցենտրացիաների փոփոխությունները համեմատված են իպսիլատերալ կիսագնդի փոփոխությունների հետ՝ բացի ասպարազինաթթվից, որի կոնցենտրացիան աճում է 1.27 անգամ՝ կազմելով 489±45.98մկգ/գ ($p<0.001$), մյուս ամինաթթուների՝ գլյուտամինաթթվի, գլիցինի, տաուրինի, ԳԱԿԹ-ի կոնցենտրացիաները համապատասխանաբար նվազում են 1.53, 2.43, 1.32, 5.14 անգամ ($p<0.001$)՝ համապատասխանաբար կազմելով 969.92±45.45մկգ/գ, 50.81±6.48մկգ/գ, 484.88±25.08մկգ/գ, 35.74±1.63մկգ/գ:

Փորձարարական խմբում ԹUSL ստացած առնետների մոտ իշեմիայից 6 օր անց ասպարազինաթթվի կոնցենտրացիան 1.89 եւ 1.49 անգամ ցածր է հսկիչ խմբի 6-րդ օրվա եւ նորմայի ցուցանիշների համեմատ ($p<0.001$): Գլյուտամինաթթվի կոնցենտրացիան կազմում է 938.78±30.97մկգ/գ, ինչը հավաստիորեն չի տարբերվում հսկիչ խմբում գրանցված ցուցանիշից եւ 1.58 անգամ նվազ է նորմայից ($p<0.001$): Գլիցինի կոնցենտրացիան գրանցվել է 43.19±5.61մկգ/գ, որը 1.19 անգամ նվազ է ԹUSL չստացած առնետների մոտ գրանցված ցուցանիշներից ($p<0.05$): Տաուրինի գրանցված 532.61±29.65մկգ/գ կոնցենտրացիան գերազանցում է հսկիչ խմբի ցուցանիշը 1.11 անգամ ($p<0.01$)՝ մնալով 1.19 անգամ ցածր նորմայից ($p<0.01$): ԳԱԿԹ-ի կոնցենտրացիան գրանցվել է 116.75±5.46մկգ/գ, ինչը գերազանցում է հսկիչ խմբի 6-րդ օրվա ցուցանիշը 3.25 անգամ ($p<0.001$), սակայն նորմայի համեմատ նվազ է 1.58 անգամ ($p<0.001$):

Կեղեւի ճակատային հատված (կեղեւ դիմային):


Ասպարազինաթթվի կոնցենտրացիան պահպանվում է նորմայի սահմաններում (368.92±30.99մկգ/գ, $p>0.05$): Գլյուտամինաթթվի, գլիցինի, տաուրինի եւ ԳԱԿԹ-ի կոնցենտրացիաները համապատասխանաբար նվազում են 1999.74±104.4, 128.07±9.75, 771.24±50.02, 177.9±4.53մկգ/գ-ից մինչեւ 1242.31±64.88, 43.99±3.46, 601.58±25.05, 58.05±11.8մկգ/գ ($p<0.001$):

ԹUSL-ի ներմուծման պայմաններում գրանցվում է բոլոր ներյուակտիվ ամինաթթուների կոնցենտրացիայի աճ իշեմիկ խմբի համեմատ: Ասպարազինաթթվի կոնցենտրացիան ավելանում է 1.12 անգամ ($p<0.01$), որը գերազանցում է նորման 1.11 անգամ: Տաուրինի կոնցենտրացիան մեծանում է 1.25 անգամ ($p<0.001$), իսկ նորմայի հետ համեմատած տարբերությունը հավաստի չէ:

Գլյուտամինաթթվի, գլիցինի եւ ԳԱԿԹ-ի կոնցենտրացիաները գերազանցում են իշեմիկ խմբի ցուցանիշները համապատասխանաբար 1.16, 1.6, 2.48 անգամ ($p<0.001$), սակայն նորմայի համեմատ մնում են ցածր մակարդակի վրա ($p<0.01$):

ԹUSL-ի ազդեցությունը էքսայտոտորսիկոլոթյան Գործակցի (ԷԳ) վրա

Չետիշենիկ շրջանի 6-րդ օրը ՄՈՒԶ-ի կապման հետեւանքով իշեմիկ խմբում ԷԳ-ը հավաստիորեն գերազանցում է նորմայի ցուցանիշը գլխուղեղի բոլոր հատվածներում՝ բացառությամբ կեղեւի դիմային հատվածի: ԹUSL-ի ներմուծման պայմաններում ԷԳ-ը հետազոտված բոլոր հատվածներում հավաստիորեն ավելի ցածր է՝ համեմատած թե կեղծ հսկիչ խմբի եւ թե իշեմիկ խմբի հետ (նկար 4):



Նկար 4. ԷԳ-ի փոփոխությունները առնետների գլխուղեղի տարբեր հատվածներում հետիշենիկ շրջանի 6-րդ օրը

* $p<0.05$ համեմատած հսկիչ խմբի հետ, † $p<0.05$ համեմատած իշեմիկ խմբի հետ

Առնետների գլխուղեղի տարբեր հատվածներում ամինաթթուների տեղաշարժերը եւ դրանց համոլոլոլը ԹUSL-ով ՄՈՒԶ-ի կապման պայմաններում իշեմիայից 12 օր անց:

Չիպոթալամիկ շրջան

Չիպոթալամիկ շրջանում հետիշենիկ շրջանի 12-րդ օրը ասպարազինաթթվի եւ գլյուտամինաթթվի կոնցենտրացիաները, նորմայի հետ համեմատած, ավելանում են համապատասխանաբար 1.46 եւ 1.47 անգամ ($p<0.001$): Միեւնույն ժամանակ գլիցինի, տաուրինի եւ ԳԱԿԹ-ի կոնցենտրացիաները, նորմայի հետ համեմատած, նվազում են համապատասխանաբար 4.17, 2.03 եւ 6.13 անգամ ($p<0.001$): ԹUSL-ի ներմուծման պայմաններում ասպարազինաթթվի կոնցենտրացիան մնում է նույն մակարդակի վրա համեմատած իշեմիայի հետ: Գլյուտամինաթթվի կոնցենտրացիան ավելանում է՝ գերազանցելով նորմայի ցուցանիշը 1.4 անգամ ($p<0.001$): ԳԱԿԹ-ի կոնցենտրացիան համեմատած իշեմիկ խմբի հետ, ավելանում է 4.6 անգամ ($p<0.001$), սակայն նորմայի հետ համեմատած մնում է ցածր մակարդակի վրա ($p<0.001$):

Չիպոկամպ

